681 Դու գիտակցաբար մահվան գնացիր՝

1. Դու գիտակցաբար մահվան գնացիր՝
Տառապանքներիդ տեղյակ լինելով:
Խոր վերքերի մեջ Դու լուռ մնացիր՝
Քո ծանր խաչը սիրով տանելով:

Թվում է՝ ձայնդ է հասնում ականջիս,
Երբ որ գամում են Քո սուրբ ձեռքերը,
Կարծես ասում ես. «Ակա՛նջ դիր կանչիս
Ու գնահատի՛ր իմ այս վերքերը»:
Ինչպե՞ս կարող եմ, Տե՛ր, մոռանալ
Տառապանքներդ ու տանջանքներդ,
Հոգիս իմ ներսում սկսում է լալ,
Երբ միտք եմ բերում գամված ձեռքերդ:

2. Դեմքդ եմ տեսնում՝ արյան մեջ կորած,
Քո Հոգով օծված հոգուս աչքերով,
Տեսնում եմ նաև կողդ խոշտանգված,
Եվ սուրբ գլուխդ՝ պատված վերքերով: